ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

20.11.2019թ.
ք. Երևան ժամը՝ 12:00

Հանձնաժողովի նախագահ՝
ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ՝ Ն. Հայրապետյան

Անդամներ՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի խորհրդական՝ Ա. Շատվորյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութատեխնիկական ապահովման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. Շաբոյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ՝ Լ. Միքայելյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության առաջատար մասնագետ՝ Հ. Շեկոյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների գործակալ՝ Ա. Պետրոսյան

1. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համաձայն որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1.1 Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվության, «Մաքս օիլ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ինչպես նաև բավարարում է սույն հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին:
1.2 Գնահատող հանձնաժողովը բավարար գնահատեց ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Մաքս օիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հրավերով նախատեսված պահանջներին, որը արտացոլվեց նախապես տրամադրված գնահատման թերթիկներում:
1.3 «Մաքս օիլ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցություն չունեցող անձանց ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

<u>Հանձնաժողովը որոշեց.</u>

2.1. Վարչապետի աշխատակազմի (Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի) կարիքների համար ձնեռային դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված

գնանշման հարցման գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Մաքս օիլ» ՍՊԸ-ին:

2.2 Հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Մասնակցի հետ համապատասխան չափաբաժնի մասով կնքել պայմանագիր՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

2.4 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

2.5 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցի հետ առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

3. Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Ն. Հայրապետյան	ԳՊ/ԳԱՊ
Անդամներ՝	Ա. Շատվորյան	ԳՊ/ԳԱ
	Ա. Շաբոյան	ԳՊ/ԳԱ
	Լ. Միքայելյան	ԳՊ/ԲԱ
	Հ. Շեկոյան	ԳՊ/ԲԱ
Քարտուղար՝	Ա. Պետրոսյան	ԳՊ/ՄՀմ